

ՄԵԾՆ ԱԹԱՆԱՍ.

ԺՆՆՂԻՅ ՄԻՆԶԵԼ ԺԵՈՆԱՂՐՈՒԹ ԻՆՆՂ.*

Ազգային հաւատի ամենամեծ և տու-
կուն պաշտպանը, Մեծն Աթանաս, ծնունդ է
Աղէքսանդրիայում մօտ 297 թուին: Նորա
մանկութեան օրերում տեղի ունեցաւ Գի-
ողեոտիանոս կայսեր ստոկալի հալածանքը
քրիստոնէութեան դէմ՝ 303-թուին: Այդ
հալածանքի մասին նա ինքը ոչինչ է մտա-
բերում: սակայն յիշատակում է իր աղգա-
կաններից լսածը, թէ ինչպէս նոյն իսկ հե-
թանոսներն անգամ վշտակցում էին քր-
իստոնեաների վիճակին հալածանքի ժամա-
նակ, և որ նոքա պատրաստ էին տուգանք-
ների ենթարկուել, բանտ նստել, քան թէ
խեղճ և անպաշտպան քրիստոնեաներին ա-
նողորմ և անգութ հալածիչների ձեռքը
մատնել: Եւ որովհետեւ նորա աստուածաբա-
նական ընդարձակ շարագրութիւնը հրատա-
րակուել է 319 թ.՝ ուրեմն և նա ծնունդ
պիտի լինի ոչ աւելի ուշ քան 297-թուը,
արդարեւ նա ինքն էլ ասում է, թէ իր
աստուածաբանական կրթութիւնը ստացել է
այդ հալածանքին ենթարկուած խոտովա-
նողների մօտ:

Նորա ծնողները քրիստոնեայ էին և
բաւականին լաւ գիրք ունէին Աղէքսանդրիա-
յում: Ինչպէս երեւում է, նոքա աղքատ
էին, բայց և այնպէս հիմնաւոր կրթութիւն
տուին իրենց որդուն թէ քաղաքական և
թէ կրօնական ուսմանց մէջ: Նա ուսում
նասիրեց քերականութիւնն և ճարտասա-
նութիւնը, իսկ նորա «Ընդդէմ հեթանոսաց»
անդրանիկ երկասիրութիւնն ապացոյց է, որ
նա ծանօթ էր Հոմերոսին և Պլատոնին, և
քաջ հմուտ յունական փիլիսոփայութեան ու
իրաւագիտութեան: Թէպէտ Աթանաս իր
մասին խօսում է միշտ առանձին համեա-

տութեամբ, սակայն ակնհայտ է, որ նա բար-
ձրը զարգացման տէր մէկն էր: Բայց այն
գիտութիւնը, որ նա ամէնից աւելի էր գը-
նահատում, ս. Գրքի քաջ ծանօթութիւնն
էր, որ և նա լիութի գործ է դնում իւր
գրութեան ժամանակ:

Աղէքսանդրիայի բազմակողմանի կեանքը
ինքն ըստ ինքեան շատ կրթիչ էր այդ ժիւր
և աշխոյժ մանկան համար: Նա այստեղ յա-
ճախակի շփուում էր վաճառականական և
քաղաքակրթութեամբ աշխարհի բազմազան ե-
րևոյթների հետ, առիթ էր ունենում լսե-
լու զանազան գիտնականների և նրանց մի-
ջոցով ծանօթանալու այլ և այլ հեթանոս և
հերետիկոս վարդապետութեանց սկզբունք-
ներին և ուղղութեան: Հաւանականաբար նա
գրիթ է ամենայն օր ականատես էր լինում
եգիպտական հեթանոսութեան սնուհապաշ-
տութիւններին, վկայ էր, թէ ինչ մեծ աղ-
ղեցութիւն ունի հրէութիւնը իւր ամենա-
կարեւոր կենդրոններից մէկում և ինչպէս
մոլորուում էին քրիստոնեաները այլ և այլ
հերետիկոսական ուղղութեանց հետեւելով:
Այսպիսով եռուն և կենդանի կեանքի այդ
կենդրոնում օրէցօր զարգանում էր նորա
միտքը և ընդարձակուում մտաւոր հորի-
զոնը, նախապատրաստուելով այն գործու-
նէութեան համար, որ, կարելի է նրա կեան-
քի «երկարատեւ ողբերգութիւնը» անուանել:

Այդ ողբերգութեան համար էական
նշանակութիւն ունին այն գէպերն ու հան-
գամանքները, որոնք տեղի ունեցան նորա
մանկական հասակում: 301-թուին եգիպ-
տոսում՝ առաջ եկաւ Մեղետեանց ազանդը:
Մեղեոտիոսը Աիկապօլսի եպիսկոպոսն էր, որը
եգիպտոսում Աղէքսանդրիայի Աթոռից յե-
տոյ, որի աթուակալն էր Պետրոս արքեպիս-
կոպոսը, երկրորդ տեղն էր բռնում: Գիսկ-
դեոտիանոսի հալածանքի ժամանակ Պետրոսը
թողեց իր վիճակը և հեռացաւ, այս հան-
գամանքից օգուտ քաղելով Մեղեոտիոսը՝ ա-
ռանց օրէէրաւասութեան, իրեն սեփակա-
նացրեց ուրիշ վիճակների համար քահանա-

* «Важнейшие источники жития Фаворского, Житие
и труды святых отцов и учителей церкви», գրքից:

ներ ձեռնադրելու և առհասարակ արքեպիսկոպոսական իրաւունքներ: Զորս եպիսկոպոսներ, որոնք բանտարկուած էին և ապա բարբարոս տանջանաց ենթարկուած: բողոքեցին նորա գործառնութեանց դէմ սակայն անլսեթ եղաւ նոցա այդ գանգատը: Ընդհակառակն Մեղետիոսը գնաց Աղէքսանդրիա և այնտեղ պաշտպանութիւն գտնելով Արիոսի և Իսիդորի կողմից, բանադրեց Պետրոսի երկու երէցներին: Նա իրեն յատուկ յամառութեամբ և ամբարտաւանութեամբ զըզուեցրեց բոլորին, մինչև որ Պետրոսի ձեռքով և եգիպտական եպիսկոպոսների ժողովի վճռով գահընկէց եղաւ: Մեղետիոս փոխանակ հնազանդելու այդ վճռին, ընդհակառակն իր անունով մի նոր աղանդ կազմեց, որ և նշովուեցաւ Նիկիոյ ս. ժողովում 325-թուին: Իսկ իրեն Մեղետիոսին, թէ և դատապարտեցին իր տգեղ վարմունքի և թեթեւամտութեան համար, բայց և այնպէս շնորհեցին նրան իր առաջնորդական ակթոսը, միայն սահմանափակ իրաւունքներով: 326-թ., երբ ս. Աթանաս գահակալ ընտրուեցաւ Ալեքսանդրիոյ գերագահ ակթոսին, Մեղետիոս բոլորովին անձնատուր եղաւ արիոսականներին, անցնելով նրանց կողմը, որով այն աստիճան ատելի դարձաւ, որ արքեպիսկոպոսը ակամայից բացականցեց, «Նրանի, թէ նա ամենեւին ընդունուած չլինէր Նիկիոյ ս. ժողովում»: Նորա հետեւողները իրենց գոյութիւնը պահպանեցին մինչև 5-րդ դարը:

Պատանի Աթանասի վրայ աւելի մեծ ազդեցութիւն գործեց մի ուրիշ հանգամանք: Արիոսի Աղէքսանդրիա գալը իր հայրենիքից: Այդ «մեկամաղձոտ» ցնորամիտ ճիւղը՝ Աղէքսանդրիայում եղել է և՛ այն ժամանակ, երբ նորա վարդապետութիւնը առանձին ուշագրութեան առարկայ չէր եղել, Նա իր խելքով իր ընդունակութեամբ, իր ունեցած եռանդով նշանաւոր մարդ կը լինէր: Եթէ որպէս աղանդապետ հանդէս դուրս չգար, Նա դէմքով դժգոյն էր, ար-

տայայտութիւնը մութ, հերարձակ, աղքատիկ հագուստով, իսկ շարժումներով հաճելի և համակրելի: Պատմում են, որ նա սկզբում Մեղետիոսի կուսակից էր, ապա Պետրոսի կողմն անցնելով նրանից սարկաւագ ձեռնադրուեց, բայց շուտով կտակածելի դարձաւ: Մանուկ Աթանասը հաւանականօրէն յաճախ տեսնում էր նրան և գուցէ լսում նրա զրոյցները առանց սակայն գիտակցութիւն ունենալու նոցա մեծ հետեւանքների մասին ապագայում:

Պետրոս՝ այդ բարի եպիսկոպոսը 311 թուին մարտիրոսական պսակին արժանացաւ: 306 թուին տանջանքի էր ենթարկուել մի ուրիշ եպիսկոպոս Ափրիկէի եկեղեցուց՝ Փիլէոսը: Եթէ Աթանաս անձամբ ականատես չէր այդ ճշմարիտ քրիստոնեաների պանծալի մահուան, անկարելի էր, որ նրա մանկական հոգու վրայ զօրեղ կերպով չազդէր նոցա արիական նահատակութեան պատմութիւնը: Աւանդութիւնն ասում է, թէ մի անգամ Քրիստոս տեսիլքի մէջ երեւցել է Պետրոսին՝ զգեստը պատռուած Արիոսի ձեռքով, և յանձնարարել Նորան, որ զգուշացնէ իր յաջորդներին այդ նոր աղանդից:

Անկասկած Աթանաս խնամքով գաստիւրակուել և սնուել էր ուղղափառ հաւատի մէջ: Այդպիսի կրթութիւնն անհրաժեշտ էր մանաւանդ մի քաղաքում, որպիսին էր Աղէքսանդրիան, որտեղ հրէաների և հեթանոսների կողմից ծաղր ու ծանակի էին ենթարկուում այն բոլոր ճշմարտութիւնները, որոնց համար քրիստոնեաները պատրաստ էին սիրով մահ յանձն առնել: Բարեբաղդաբար նա աստուածաբանութիւնն ուսանելիս ենթակայ էր այլ հոգեւոր ազդեցութեանց, որոնցից ամենազօրեղը պէտք է համարել այն բարեկամութիւնը, որ հաստատուեց նրա և Անտոն ճգնաւորի մէջ. «բաւական ժամանակ ծառայում էր նա նրան և Զուր ածում նրա ձեռքերին»: Նոյնիսկ Անտոնի կենդանի օրինակը, ինչպէս կարծուում է, նրա մէջ արծարծեց ջերմ ոգեւորութիւն

միայնակեցութեան գաղափարներ չհամարու
ե երբ նա՝ զեռ ևս երիտասարդական հա-
սակում, կոչուեցաւ Ազէքսանդրիայի եպիս-
կոպոսական աթոռի վրայ բազմելու, արգէն
ճգնաւորի հեղինակութիւն ունէր ժողովրդի
աչքում: Այն կայտառութիւնը, կարմիր և
առողջ դէմքը, գեղեցիկ խօսքերը և գթա-
սիրտ վարմունքը, որ աւանդութիւնն ընծա-
յում է Մեծն Անտոնին, պէտք է նպաստէին
անշուշտ կրօնական և ճգնական կեանքը
պատանի աղէքսանդրացու վառվառն հոգու
առաջ ամենահրապուրիչ գոյներով ներկա-
յացնելու: Նորա ծանօթութիւնը անապա-
տական կեանքի հետ և այն սէրը, որ նա
վայելում էր անապատականների կողմից,
ապագայում՝ գլխաւոր միջոցներն եղան նրան
ազատելու թշնամիների մեքենայութիւններից
և խարդախութիւններից: Մի պատմիչ հա-
ղորդում է, թէ ինչպէս հալածանքի ժամա-
նակ Անտոն համարձակ գալիս է Ազէքսան-
դրիտ, որտեղ նրան ամէնքը ճանաչում էին,
և թէ ինչպէս առանց երկիւղի իր մօրթէ
զգեստով գնում-կանգնում է կուսակալի
առաջ:

312 թ. Աքիլլէսի կարճատեւ եպիսկո-
պոսութիւնից յետոյ, արքեպիսկոպոսական
աթոռի համար ընտրուում է Ազէքսանդրը:
Նորա ընտրութիւնից քիչ անցած, ըստ Ռու-
ֆինի, մի հետաքրքրական դէպք է տեղի ու-
նենում: Ազէքսանդր մի անգամ տօնում էր
իր նահատակուած նախորդի՝ Պետրոսի, «ծը-
ննդեան օրը» և սպասում էր իր ստորա-
գրեալ հոգեւորականներից մի քանիսին, ո-
րոնք պէտք է մասնակցէին իր տան պատ-
րաստուած հացկերոյթին: Նորա տան լու-
սամուտները նայում էին դէպի ծովը, և
երբ նա կանգնած դիտում էր նաւահան-
դիստը, տեսաւ այնտեղ մի խումբ երեսա-
ների, որոնք եկեղեցական արարողութիւն-
ները իրենց խաղի առարկայ էին դարձրել:
Մտածելով՝ որ նոքա իրանց խաղի սահմանից
անցել են, նա հրաւիրեց մի քանի հոգեւոր-
ականների ուշադրութիւնը այդ խաղի վրայ

և հրամայեց երեսաներին իր մօտ բերել
երեսաները փոքր ինչ տատանուելուց յետոյ՝
ստիպուեցան խոստովանել, որ Աթանասին
խաղի ժամանակ եպիսկոպոս էին դարձրել
և նա մկրտում էր այն երեսաներին, որոնք
արգէն պատրաստուում էին մկրտութեան
խորհուրդն ընդունելու, ծովի մէջ ընկղմե-
լով և կատարելով բոլոր արարողութիւնները:
Արքեպիսկոպոսը, տեսնելով որ բոլոր էա-
կան հարց ու պատասխանները կանոնաւոր
կերպով տեղի են ունեցել, որոշեց այդ մկր-
տութիւնը վաւերական համարել, աւելացնե-
լով նաև գրողի խորհուրդը:

Նա իր մօտ հրաւիրեց այն երեսաների
ճնօղներին, որոնք խաղի ժամանակ քահա-
նայ էին դարձել, և խորհուրդ տուեց նրանց,
որպէս զի իրենց որդիներին պատրաստեն
քահանայական կոչման համար: Իսկ Աթա-
նասին՝ ուսումն աւարտելուց յետոյ, պա-
հում էր իր տանը: Սոցոմենոսի ասելով պա-
տանին նրա գրագիրն ու քարտուղարն էր:

Աթանաս, զեռ երիտասարդական հա-
սակում, գրեց իր «ընդդէմ հեթանոսաց»
շարագրութիւնը, որով նա հերքում էր հե-
թանոսութիւնը և պաշտպանում միասու-
րւածութեան գաղափարը: Այդ շարագրու-
թեան մէջ հեղինակի աչքի ընկնող ինքուրոյ-
նութիւնն ու մտքի կորովը զօրեղ տպաւո-
րութիւն են գործում: Առաջին մասը նուիր-
ուած է մի կարգ մտորակապաշտութեանց,
որոնք ընդունելի էին շատ հեթանոսների
համար, երկրորդ մասը դրական բնաւորու-
թիւն ունի, որտեղ պաշտպանում է Քրիստո-
սի միջոցով յայտնուած մի Աստուծոյ գա-
ղափարը: Նոյն խնդրով նա զբաղւում է
նաև իր «Վասն մարմնաւութեան» անունով
գրուածքի մէջ, որ թէև նորա մատաղ հա-
սակի գործ է, բայց և այնպէս նշանաւոր է
կրկին կողմերով. նախ նրանով, որ չափազանց
պարզութեան հետ հանդէս է բերում հեղինակի
խորին և ջերմ համոզմունքը այն ճշմարտու-
թեան համար, որ ամբողջ քրիստոնէութիւնը
կենդանացած է մի աստուածային անձնա-

ւորութեան մէջ և ապա նրանով որ այդ քրիստոնէական ճշմարտութիւնը փիլիսոփայական—կրօնական եղանակով արտայայտուանդրանիկ փորձերից մէկն է:

Թարգմ. Յ. Վ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲՐԱՆԻԿԱՆ

ՆԱԹՈՂԻՆ ԵՎԾՂԵՑԻ

—Լեւոն ԺԳ. պապը հայ կաթողիկէների կաթողիկոս գերապայծառ Աղաբանին դարձեալ 20,000 ֆրանկ է ուղարկել իրրե նպատ փոքր Ասիայի հալածուած հայ քրիստոնէաներին: Սրանով պապի ուղարկած նպատի գումարը կը հասնի 70,000 ֆրանկի: Ուրախալի է, որ հարիւր հազարաւոր հայ կաթողիկոսներին ոգտին զոնէ այդքան նպատ է ուղարկուում որովհետեւ մինչև ցարդ Եւրոպայի ցամաքային երկրներից այդ առաջին նպատն է յօգուտ հալածեալ հայերի, Եւրոպայի ցամաքի ժողովուրդները կարծես թէ քրիստոնէական և մարդասիրական զգացմանց անգամ չեն արժանացնում հայերին մինչև իսկ այն վայրկենին, երբ նրանց ականջին հնչում են. «ի սէր մարդկութեան և ի սէր քրիստոնէութեան օգնեցէք մեզ, 100,000 հոգի կոտորուել են մեզնից և 500,000 սոված, անտուն և ցրտի ու հիւանդութիւնների ներ մատնուած» (Allgem. Zeit.):

—Բողոքող իշխան Ֆերդինանդ Վորուրդի որդու հաւատափոխութեան խնդիրը պապի կողմից ընդդիմութեան է հանդիպում: Ինչպէս լրագիրներն հաղորդում են, պապն սպառնացել է Ֆերդինանդին բանադրելու: Մի այլ աղբիւրից հաղորդում են, որ պապն համաձայն է թողլ տալու Բորիս իշխանին օրթոդոքս մկրտուելու, եթէ միայն բոլղարական եկեղեցին Հոռոմի գերիշխանութիւնն ընդունի և Ունիա յի մէջ մտնի կաթողիկէ եկեղեցու հետ:

—Վաթիկի եկեղեցուն ամենայն տեսակ մեղադրանք յարմարեցնում են, սակայն ոչ երբէք եռանդի պակասութիւն. ահա մի օրինակ ևս. հազիւ հրատարակուեց տիեզերական պատրիարքի շրջաբերական պատասխանը պապին, որ արդէն լոյս տեսաւ դրա հերքումն: Այդ հերքման տեսքը ծախուում է այժմ Կ. Պօլսի բանուկ փողոցներում և յոյն եկեղեցիների բակերում:

—Պապի միաբարական ձգտումների ընդդէմ հետզհետեւ առաջ են բերում այնպիսի ծանրակշիռ փաստեր, որոնք ամենեւին չեն համաձայնում Լեւոն ԺԳ. ի խաղաղասիրական կոչումներին: Աւստրիոյ

կայսրութեան բոլոր կողմերից միաբանական ժողովրդների կողմից անասելի տրտուներ են լինում օրթոդոքս միաբանական ուսմանները, ներքոգովինացիք և Բոսնիացիք յիսուսականների ծանկերին են մատնուած և դրանք արդէն քայլ առ քայլ ոչնչացնում են այդ ժողովրդների եկեղեցական ինքնուրոյնութիւնները, Գալիցիայի առաջնորդ Սեմբրատովիչ մետրոպոլիտն իւր մեծամեծ ծառայութեանց համար, որ ցոյց է տուել պապական եկեղեցուն, արժանացել ծիրանաւորութեան:

Միաբանական եկեղեցու գլխին եկած փորձանքների մասին նոյն իսկ կաթողիկէները չեն քաշուում պատմելու, Լաւիսի և Ռամբոյի խմբագրութեամբ վերջին տարիներս հրատարակուող վերին աստիճանի հետաքրքրական ընդհանուր պատմութեան մէջ (Histoire generale du IV Siecle à nos jours, ed. par Lavissee et Rambaud. T. V. Paris 1895 եր. 720 և 721) յառաջ է բերուած այն սոսկալի հալածանքների նկարագիրը, որ կրել են կաթողիկէ եկեղեցու հետ միացած օրթոդոքսները: Այս հալածանքները ոչ մի կերպով տարբեր չեն հուգենոտների կրած հալածանքներից, կամ նոյն իսկ հալածանքներից, որ այսօր հայ քրիստոնէաներն են կրում Տաճկաստանում: Մեր եկեղեցուց բռնի խլած 40,000 հայերի կրած հալածանքները այդ շրջաններին էին և յայտնի են մեր եկեղեցական պատմութեան մէջ, «Նիկոյ Թորոսովիչի» պատմութեան անունով:

—Այս տարի յուլիսի 6-ին լրացաւ պապական եկեղեցու վերջին ժողովի 25-ամեակը: Եկեղեցական թերթերը հետաքրքրական տեղեկութիւններ են հաղորդում այդ ժողովի մասին: Պիոս պապը մինչև անսխալականութեան վարդապետութեան ժողովը գումարելը 2 տարի շարունակ եպիսկոպոսների թիւն սկսաւ շատացնել, բայց որովհետեւ թեմեր չը կային, ուստի այդ եպիսկոպոսները ձեռնադրուում էին in partibus infidelium (ի բաժնի հեթանոսաց), և ինչպէս ծագրելով ասում էին այն ժամանակ, այդ եպիսկոպոսների թեմերը լուսնի վերայ էին: Վատիկանի ժողովին մատնակից էին 770 եպիսկոպոս, որոնցից 300 հոգի պապին էին ուձիկ ստանում: Իտալացի եպիսկոպոսների թիւն էր 276, որից պապի թեմից միայն 143 եպիսկոպոս 2¹/₂, միլիոն ժողովրդի համար, մինչև Եւրոպական բոլոր միւս կաթողիկէների կողմից ներկայ էին 156 եպիսկոպոս միայն:

—Այս տարի սեպտեմբերի 3—8 Բրիւսսէլում տեղի ունեցաւ «Երբ որդ միջազգային կաթողիկէական գիտնականների ժողովը», Այդ ժողովում 8 բաժիններ էին աշխատում. ահա դրանց զբաղումների ցանկը. 1) կրօնին վերաբերող